Ս.ՇՏԻԿՅԱՆ

ԳՐՎԱԾ Է ՏԱՌԱՊԱՆՔՈՎ

Սովետահայ արձակագիր, բանասիրական գիտությունների դոկտոր, Հանրապե–տության պետական մրցանակի դափնեկիր, իսկ բոլորովին վերջերս էլ՝ Հանրապետության կուլտուրայի վաստակավոր գործիչ Խաժակ Գյուլնազարյանի հերթական գրքույկը ունի առաջին հայացքից տարօրինակ վերնագիր՝ «Գիրք անակնկալ»: Ոչ այստեղ զետեղված գործերը, և ոչ էլ այդ գործերի գեղարվեստական մտածողության մակարդակն ու գրական արտահայտչաձևերը «անակնկալային» ոչինչ չունեն իրենց մեջ: Գրքույկի այդ վերնագիրը հասկանալի է դառնում և հետևաբար, իր համոզիչ պատճառաբանությունն է ստանում այն զարմանալի, իսկապես անակնկալ շրջադարձերով հարուստ իրադարձությունների երկար շղթայի պատճառով, որը տարիների հոլովույթում վիճակվել էր նրան: Այդ ճակատագիրը ծայր առավ դեռ 1942 թ. սկզբներից, երբ հրետանային դասակի հրամանատար Խաժակ Գյուլնազարյանը Կերչի ռազմաճակատում, գերակշիռ ուժեր ունեցող թշնամու հետ անհա–վասար գոտեմարտի ժամանակ, հարկադրված եղավ բաժանել զինվորի կյանքի ամենա–դառը վիճակը՝ գերի ընկավ: Իսկ գերի, նշանակում էր տևական ստորացումներ, անմարդ–կային տառապանքներ, հայրենիքի ու մի կտոր հացի մշտական կարոտ: Բայց գերի, նաև նշանակում էր մարդային բնավորությունների խստաշունչ քննություն, ընկերասիրության, ներքին բարձր նկարագրի դրսևորման, իրար նկատմամբ հոգատարության և այլ՝ այս կար–գի հասկացողությունների դաժան ստուգում: Շատերը եղան, որ չդիմացան և զոհվեցին հայրենիքի ու մի կտոր հացի կարոտը սրտում: Եղան այնպիսիններն էլ, որոնց մոտ մի կտոր հացի կարոտն ավելի ուժեղ եղավ, քան հայրենիքի կարոտը, և որոնք հայրենիքը փո–խեցին մի կտոր հացով: Այո, եղան և այդպիսիները...

Ամբողջ երկու տարի Խաժակ Գյուլնազարյանն անցկացրեց Ռումինիայում գտնվող երկրային այդ դժոխքում, մինչև կոկորդը վայելեց ճամբարային կյանքի բոլոր «բարիքները» և երկու տարի անընդհատ, առաջին իսկ հնարավորության ու հարմարության դեպքում... ստեղծագործեց:

Այո, համակենտրոնացման ճամբարի, ամենօրյա մահերի, դարչնագույն զինվորների ու պահապան շների պայմաններում նա թղթին էր հանձնում իր մտքերը, հուզումնառատ ապրումները, կյանքի՝ իրեն բաժին ընկած զիգզագների մասին մտորումները: Ընդգծելին, սակայն, այն է, որ ճամբարականի զարհուրելի վիճակը անհույս հոռետեսություն և ան–

հեռանկար մռայլամոլություն չծնեցին նրա մոտ: «Ցավի գրկումն էլ պայծառ է ճակատս». այս եղավ ռազմագերի Խաժակ Գյուլնազարյանի հավատամքը, որը նա մինչև վերջ կարո–ղացավ աներեր պահել: Գրեց «Իմ ցավը» վերնագրով մի բանաստեղծություն էլ , որտեղ այդ զգացման գերագույն դրսևորումը հետևյալ էր՝ «Թե այս սև թուխպը (իմա. ֆաշիզմը. Ս.Շ.) երկա՞ր կմնա իմ հայրենիքի պայծառ ճակատին»: Անթեղված կրակի պես վառ պահեց կա–րոտը իր հայրենի երկրի հանդեպ, արևաշող Հայաստանի, իր պաշտելի Երևանի ու երևան–յան երեկոների և այն ոսկեծամիկ աղջկա հանդեպ, որն անձկանոք սպասում է իրեն: «Մնաց սրտումս հայրենի կարոտը և անկոր հավատս» որպես սրբազան երդում գրում էր ռազմա–գերին:

Չկար ոչ թուղթ ու մատիտ, ոչ էլ թանաք ու գրիչ: Գրելու հնարավորություն ընդհան–րապես չկար: «Ես գրում էի թաքուն, երրորդ հարկի նառի վրա պառկած» հետագայում վեր–հիշելու է Խաժակ Գյուլնազարյանը: Ռումինահայ մի աղջիկ կար, որը մեծագույն զգուշու–թյամբ ու վախով համակենտրոնացման ճամբար էր բերում մաքուր թերթեր, որոնց վրա Գյուլնազարյանը վերարտադրում էր իր ապրածն ու զգացածը: Հասկանալի է, բռնվելու դեպքում երկուսն էլ հատուցելու էին կյանքով...

Գրված թերթերը ստվարացան, դարձան ձեռագիր, որը դուրս բերվելով համակենտ–րոնացման ճամբարից, հանձնվեց ռումինահայ կրթական-մշակութային գործիչ, դոկտոր Արամ Սալբուն ի պահ: Կարիք չկա, թերևս, ասելու, որ շատ էջեր կորան անվերադարձ:

Այսպես շարունակվեց մինչև 1944 թ. կեսերը, երբ Խորհրդային բանակի հուժկու «ուռան» եկավ Ռումինիայում ազգարարելու ազատության արշալույսը, և հետևաբար, խոր–տակելու բոլոր համակենտրոնացման ճամբարները: Ի թիվս այլոց ազատվեց նաև Խաժակ Գյուլնազարյանը և ի թիվս այլոց անհապաղ դիմեց խորհրդային հրամանատարությանը՝ կամավոր ռազմաճակատ մեկնելու խնդրանքով:

Եվ սահեցին տարիները, եկավ 1945 ուրախաբեր թվականը, որն ազդարարեց Հայ–րենական մեծ պատերազմի հաղթական ավարտը: Ի թիվս հազար-հազարների տուն վե–րադարձավ նաև Խաժակ Գյուլնազարյանը, աշխատանքի անցավ Երևանի Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում, գրեց գրականագիտական ու գեղարվեստական մեկից ավելի ստեղծագործություններ, որոնցից շատերը թարգմանվեցին ռուսերեն ու աշ–խարհի բազմաթիվ ժողովուրդների լեզուներով, բայց երբեք չմոռացավ ճամբարային տա–ռապանքների իր ծնունդը՝ գիրք-ձեռագիրը, «Գիրք անակնկալը»:

Իսկապես, ի՞նչ եղավ այն, պահպանվե՞լ է արդյոք, թե՝ ոչ, և եթե պահպանվել է, ապա՝ որտեղ: Կատարված փնտրտուքները ոչ մի շոշափելի արդյունքի չհասցրեցին և ի վերջո ին–քը՝ Խաժակ Գյուլնազարյանն էլ համակերպվեց այն մտքին, որ «Գիրք անակնկալը» պետք է անդառնալիորեն կորած համարել:

Եվ հանկարծ...

1964 թվականի հոկտեմբերին «Գրական թերթը» ի լուր աշխարհի ազդարարեց զար–մանալի և հուզիչ մի նորություն. Խաժակ Գյուլնազարյանի «Գիրք անակնկալը» գտնվել էր:

Պարզվեց, որ Արամ Սալբին ևս տարիներ շարունակ հարցումներ էր կատարել հեղինակին գտնելու համար: Բավարար արդյունքի չէր հասել հիմնականում այն պատճա–ռով, որ գրքույկը ստորագրված էր «Խ. Նեգրու» կեղծանվամբ: Ի դեպ նշենք, որ այս կեղծա–նունը Խաժակ Գյուլնազարյանը հետագայում այլևս երբեք չի օգտագործել: Եվ ռումինահայ բժիշկը ամբողջ քսաներեք տարի գիրքն իր մոտ պահելուց հետո, այն հանձնում է որպես տուրիստ Բուխարեստ այցելած սովետահայ պատմաբան, պրոֆ Ար. Մնացականյանին, խնդրելով փորձել Մայր Հայրենիքում գտնել հեղինակին: Եվ հաջողվում է...

1964 թ. աշնանը Երևանում հանդիսավոր պայմաններում Խաժակ Գյուլնազարյանին հանձնվեց «Գիրք անակնկալը»: Կարիք կա՞ ասելու, թե անսքող հուզումի ինչպիսի ան–պատմելի պահեր ապրեց նրա հեղինակը...

«Գրական թերթի» հոդվածը ասես հաղթական երթի ներածությունը լիներ: «Գիրք անակնկալի» և նրա հեղինակի մասին տպագրվեց «Տասսի հաղորդագրությունը», որին հա–ջորդեցին ավել կամ պակաս ծավալուն հոդվածներ ինչպես Միության, այնպես էլ Հայկա–կան հանրապետության այլևայլ թերթերում ու ամսագրերում: Սրան էլ հաջորդեցին ռադիո և հեռուստատեսային հաղորդումներ, Միության և Հայաստանի բազմաթիվ ընթերցողների նամակներ ուղղված ինչպես խմբագրություններին, այնպես էլ անձամբ հեղինակին, վեր–ջապես ամենազանազան բնույթի հանդիպումներ և այլն: Եվ ստացվեց տարօրինակ մի իրադրություն: Կար ինքնատիպ ճակատագիր ունեցած «Գիրք անակնկալը», որի մասին ասվում ու գրվում էր շարունակ, սակայն այն դեռ չէր ներկայացել իր բազմաքանակ ընթեր–ցողներին և այսպիսով, դեռ մնում էր չկայացած:

Այս զարմանահրաշ ճակատագիրն ունեցող գրքույկն է, ահա, որ «հայտնաբերվելուց» ավելի քան քսան, իսկ գրվելուց՝ մոտ քառասուն տարի հետո, «Սովետական գրող» հրատա–

բակչության ջանքերով, ճանաչված արձակագիր Վարդգես Պետրոսյանի ջերմ առաջաբանով, հայ ընթերցող ու գիտական հասարակայնությանն է ներկայացնում հեղինակը, մի գրքույկ, որի հետագա գրական ճակատագիրը արդեն կարելի է երաշխավորված համարել: